ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 5-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, Մայր տաճարում պաշտվում է Ծնընդյան Ճրագալույցի ժամերգություն, որին ներկա են լինում բազմաթիվ հավատացյալներ:

Ճրագալույցի ժամերգությանը և արարողություններին նախագահում է Վեհափառ Հայրապետը:

Հոգևոր ճեմարանի սաները ընթերցում են Դանիելի գրքի Երից Մանկանց օրհներգությունը:

Ճրագալույցի ժամերգությունից հետո սկսվում է ս. պատարագի արարողությունը: Պատարագում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում Ծննդյան տոնի նախատոնակը և հնչում է «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականը:

Ժամերգության ավարտին եկեղեցական թափորը երգով ու շարականով ուղղվում է դեպի վանական սեղանատուն, ուր օրհնվում է մայրավանքի աղն ու հացը, և միաբանությունն ու ուսանողությունը ճաշակում են Ծննդյան նավակատիքի բարիքները:

Հունվարի 6-ին, հինգշաբթի օրը, դեռևս վաղ առավոտից, հավատացյալների հոծ բազմությունը լցնում է Մայր տաճարն ու նրա շրջափակը: Առավոտյան պաշտվում է ս. Ծննդյան հանդիսավոր ժամերգություն:

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը: Պատարագում է տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա լինելու ս. Ծննդյան պատարագին, որը հանդիսավորությամբ շարունակվում է մինչև «Հայր մեր»-ը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան՝ Իր ոգեշունչ քարոզով ավետելու Քրիստոսի Ծննդյան հոգևոր բերկրանքը և ավետիսը եկեղեցուն և ողջ հայությանը:

Հայոց Հայրապետի քարոզը տպագրվել է սույն համարում (էջ 3):

Հավարտ ս. պատարագի հաղորդություն են առնում ինչպես հավատացյալներից շատերը, այնպես էլ սփյուռքահայ բազմաթիվ ուսանող-ուսանողուհիներ:

Ս. պատարագից հետո ավանդական շքով Մայր տաճարում կատարվում է Փրկչի մկրտության տոնը՝ Զրօրհնյաց հանդեսը՝ պատարագիչ տ. Կոմիտաս եպիսկոպոսի հանդիսադրությամբ:

Ս. Սեղանի առջև դրված են կաթսաներ՝ լցված ջրով: Պատարագիչ սրբազանը խաչը ջուրն է գցում, և տաճարի կամարների տակ հնչում են «Այսօր ձայնն հայրական» և «Ով զարմանալի» մեղեդիները:

Հավարտ Զրօրհնյաց հանդեսի Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվում է Վեհարան՝ ընդունելության դահլիճը:

Հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը ս. Ծննդյան տոնի առիթով շնորհավորում է Հայոց Հայրապետին՝ ցանկանալով Նրան քաջառողջություն, արևշատություն և հովվապետական երկար-երկար օրեր՝ ի փառս Մայր Աթոռի շինության և պայծառության:

Այնուհետև օրհնության խոսք է ասում Նորին Սրբությունը: Նա իր խոսքի սկզբում վշտով անդրադառնում է Մայր Աթոռի, անձամբ Իր և ընդհանրական հայ եկեղեցու կրած կորստի՝ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի մահվան տխուր առիթին: Ապա Նորին Սրբությունը շնորհավորում է բոլոր ներկաներին՝ Ծննդյան տոնի առթիվ, օրհնում է ազգը ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին և խաղաղություն է բարեմաղթում ողջ աշխարհին ու համայն մարդկությանը: